

րոշուեցաւ յաջորդ օրը ընդհանուր քուէարկութեամբ ընտրել պատգամաւորը: Հիանալի օրը սակայն մեր պատ. թաղ. խորհուրդը աղերսագիրք մը կը մատուցանէ վարդապետին խնդրելով, որ ընտրութիւնն աեղի չունենայ այդ օր, զի չպիտի կրնայ եղեր մէկ քանի ժամուն մէջ քուէարկողներու ցանկ եւ տոմարը պատրաստել: որուն վրայ բաւական խոր հրդակեցելէ յետոյ կը յետաձգուի առաջիկայ կիրակէ կատարել ընտրութիւնը:

Թէ ինչու յետաձգել ուզեց մեր պատուարժանը այս ընտրութիւնը, չենք ուզիր գիտնալ, ներկայ տողերովս ես կուզէի մտանանդի բնել, այն որ մեր Շուշույի մէջ պատգամաւորի ընտրութիւնը ժողովրդական քուէարկութեամբ տեղի պիտի ունենայ, որ եթէ չեմ սխալիր դարդ աեղ մըն ալ եզրած չէ եւ լրագրաց գրածներուն նայելով Սիւսարէ փորձըրած են այս կերպ ընտրութիւն եւ յաջողած չեն:

Մեր քաղաքին կուսակցական վիճակն նկատի ունենալով գովելի չէ՞ միթէ մեր այս միաձայն եւ ժողովրդական գործունէութիւնը:

41 Յունիս 1903
Շուշու

Պատուարժան Խմբագրութիւն
«Շարժում» լրագրի
Վառնա

Եղբայրս պանուծեան գործիք եղող ձեռքերէ վարնուած երկու անմահ զոհերու, Շահէն Միսոյի եւ Կարեգին Չիթեանի յիշատակին համար քաղաքիս Ա. Գեորգ եկեղեցւոյ մէջ, Հնչ. Մանաճիւղին նախաձեռնութեամբ՝ կատարուած հոգեհանգստեան պաշտօնին առթիւ հաւաքուած ամէն զասակարգէ եւ ամէն կարծիքէ երկսեռ ազգայնոց միասնաձայն հաւանութեամբ կազմուած բողոքարկու. Յանձնախումբս կը խնդրէ պատ. խմբագրութենէ գործարք հաճելի ներկայեալ Յայտարարութիւնը հրատարակել «Շարժում» յանալիկայ թիւին մէջ, ընդունելով առ այս մեր խորին շնորհակալութիւնները:

Հայր. Ե. Եարտրեան
Յարութիւն Ս. Բագարճգլեան
Ասատուր Մ. Գրգթսէլեան
Թագուր Գ. Հինտլեան
Սամուէլ Կ. Չորբյան
Յ. Շփափազեան
Կրօն Միջալեան

Ֆիւրպէ
8/21 Յունիս 1903

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ

Ի յիշատակ Գարեգին Չիթեանի եւ Շահէն Միսոյի կատարուած հոգեհանգստեան պաշտօնին առթիւ կազմուած յանձնախումբս, խորգման հանդիսանալով՝ ամէն զասակարգէ եւ ամէն կարծիքէ ներկայ երկսեռ

բազմութեան զգացումներուն եւ նկատելով որ մինչեւ ցարգ չեղ, կուսակցութիւնը չեն շատացած միմիայն մտանանդի ընելով փոխադարձաբար՝ իրենց ունեցած ենթադրական կամ իրական թերութիւնները, այլեւ կարգ մը անորակելի եւ անխօստովանելի միջոցներով զիրար հալածած են:

Նկատելով որ հայաձուլի այս դրութիւնը կուսակցական մոլորանդութիւն մը յառաջ բերած է ժողովրդեան այն խառնուրդն մէջ որուն քսակաւին անգիտակից են յեղափոխական ճամբիտ գործունէութեան հարկադրած պարտականութեան:

Նկատելով որ կուսակցական այս մոլորանդութիւնը պատճառ դարձած է եւ պիտի դառնայ շատ մը թանկագին ուժերու չեղքումը, եւ ջնջած է կուսակցութեան միջեւ համարաշխ եւ ազնիւ գործակցութեան մը ոգին:

Նկատելով որ հայրենիքի փրկութեան խնդիրը սերտօրէն կապուած է այս կերպով բարսուած գործակցութեան մը բարեբար արդիւնքներուն հետ:

Նկատելով որ հին-Հնչակեան կեդրոնը՝ մասնաւորաբար՝ օգուտ քաղելով աննշան թուով իրեն հետեւողներուն տգիտութենէն, իր գործիչներով եւ հանրածանօթ շրջաբերականներով ծայրայեղօրէն գրգռած է իր անգիտակից դասակարգին մոլորանդութիւնը, եւ հրահանգած է հոգով եւ մտով հարկենքին նուիրուած Շահէն Միսոյի եւ Կարեգին Չիթեանի վրայ կատարուած զազրելի ու անարդարանալի սպանութիւնները:

Նկատելով որ այս ոճրագործութիւններով հարկենքը կը զրկուի ոչ միայն Չիթեանի եւ Շահէնի նման անձնուրաց գաւկենցի, այլ եւ սոյն հրէշային սպանութեանց կոյր դերակատարները եղող ձեռքակալուած անձերէն, որոնք պիտի կրնային թերեւս թանկագին օժանդակներ ըլլալ հայ ազատագրութեան գործին: Իողճամբս ու պարտաճանաչ վարչիներու ձեռքին ներքեւ:

Նկատելով որ հին-Հնչակեան կեդրոնին յայցած ու գազանաբար կիրարկած այս գրութեան ուղղակի նետաւաճք պիտի ըլլայ, մասնաւորաբար, ոչ միայն գիտակից ու անգիտակից զոհերու, հայր մը, այլեւ ընդհանրապէս, հայ ինքնի վայրագ օրէն բունարարութիւնը եւ լիութիւնը, յեղափոխական գաղափարին վարկաբեկումը ժողովրդին մէջ եւ յեղ. կազմակերպութեանց սնբարոյացումը, — տեսակէս մը՝ որուն նախնայ ամէն հայրենասէր հայու եւ մանաւանդ ամէն ճամբիտ յեղափոխականի նուիրական պարտականութիւնը պէտք է ըլլայ ազգուրջն եւ գործնական պէտք բոլորքի:

Նկատելով, մերձագէտ, որ հին հնչակեան կեդրոնին ուղեգրած եւ նախապէս իրագործած այս հսկա մարդկային եւ եղեռնական դրութիւնը կրնայ հարկաւորապէս ստեղծել ինքնապաշտպանութեան մը պէտքը հակառակ կուսակցութեան մէջ, եւ կամ վատագաւոր հետեւանքներով լեցուն ազգեցութիւն մը ունենալ ամէն անոնց վրայ՝ որոնք զուհեյուն նկատմամբ խանդոտ պաշտամունքի մը զգացումներ կը սնուցանեն:

Եւ երկուցնելով Յանձնախումբս կորոշէ ներկայ

յայտարարութեամբ հարել արտասահմանի բոլոր հայրենի, առանց կուսակցական ու եւ է խորութեան, որ

Ա. — Իրենց պատկանած շրջանակներուն մէջ ամէն ազգեցութիւն ի գործ գնեն՝ թէ՛ յեղ վրարիչ մարմիններուն եւ թէ՛ անոնց հետեւողներուն վրայ, որպէս յեղափոխական գործունէութեան մէջ մտնէ ազնիւ, անվերապահ եւ համարաշխ գործակցութեան մը ուղղութիւնը:

Բ. — Խնդրել բովանդակ Ազգէն որ հայութենէ եւ յեղափոխականի հանգամանակ զրկուած են եղբայրսպանութեան ոճիրներով ամբաւանուած խմբակ մը նկատէ հին-Հնչակեան օրգի կեդրոնը, մինչեւ որ անիկա կարենայ շարժախիչ ապացոյցներով արգարացնել իր սեւ ոճիրները, — եթէ երբէք կրնան անոնք արդարանալ:

Հայր. Ե. Եարտրեան
Յարտրիս Ս. Բագարճգլեան
Ասատուր Մ. Գրգթսէլեան
Թագուր Գ. Հինտլեան
Սամուէլ Կ. Չորբյան
Յ. Շփափազ. ս յ
Կրօն Միջալեան
Ֆիւրպէ
6/19 Յունիս 1903

ԹԵՂԵՎՈՒԹԻՒՆ

Միւլդէն, 1 Յունիս 1903

Կրնոնք ըսել առանց վարանելու որ, 1902-1903 դպրոցական տարեշրջանը հասել աւարի մը եղաւ քաղաքիս հայ ուսանող մանուկներուն համար, վարժարանին կանոնադրաբար հինգ դպրոցակաւ շրջաններ բոլորելէ ետք, այս տարեշրջանի սկիզբը չորս հինգ ամիս փակ մնաց՝ կարտեան հանգոյցի նման անընձելի պատճառներով: Եւ սղաքները սկսած կրկին փողոցները թափափու ու մաս մըն ալ ցրուեցաւ օտար վարժարաններ՝ իսպառ խամրելու եւ տոհմային նախնական կրթութենէ յաւէտ զուրկ մնալու համար: Իսկ այն ծնողները, որոնք քիչ շատ բարեկեցիկ վիճակ մը ունէին, փոխանակ այս ախուր պարագային վերջ մը գնելու միջոցներուն վրայ խորհելու, ինչպէս ուրիշ քաղաքներ եւ զուրկ գարկին պատուելիներուն՝ ու կարենոր գումարներով իրենց հարազատները յանձնեցին՝ այն գառնագլխաւ գոյններուն, որոնք ամբողջ տարի մը «Ճիւղը» խօսքը սովորեցնելու պատուելիական բարեգաւաչները: Երբով սղոց միտքը ըմպանելէ ան, զին շանցան, Հաստացէք այդ ծընողները, եթէ մէկդի զրած ըլլային այլ եւ այլ նկատումներ՝ եւ ձեռք ձեռքի տալին եւ այս տարեշրջանին իրենց գաւակներուն կրթութեանը համար օտարներու տուած գումարին քառորդը եթէ վճարած ըլլային՝ մեր վարժարանը կրկին փայլուն վիճակ մը կուներար եւ պատուելիներուն աւանդածէն աւելի սորված պիտի ըլլային իրենց սղաքը եւ միանգամայն ու սլ գոհունակութիւնն ալ պիտի տեսնէին որ իրենց ծախսած գումարով սղաքասիկ ուսանողներու վրայ ազգային կրթութիւնը ջամբել տուած են:

Ինչպէս ըսինք, այս վերջապող տարեշրջանը շատ ամուլ եղաւ Միւլդէնի համար. զեկտեմբերի վերջերը ունեցանք տիրացու վարժարան մը որ տէր թօղիկի հարազատ աշակերտող,

ծուր ծամելէ եւ նախորդ պաշտօնեաները ձաղկելէ անդին շանցաւ: Խեղճուկ բրածոյն կարծեց որ, զանոնք դատափեսայով իր ապիկարութիւնը պիտի ծածկէ, բայց ամիսս, երկար չի տեսց, մեր արացուն իր զիտու դատարկութեամբ յայտնուեցաւ եւ ժողովորդը հիասթափ եղած՝ հասկցաւ որ իր գործը ուսուցիչէ մը աւելի խառնեցնի մը հետ է:

Ինչպէս, եղածը եղաւ, սին ու փցուն պատճառներով առիթ տուինք որ մեր ուսանող մանուկները առժեռ, գէթ այս տարեշրջանին համար աշխատանք, եւ քանի ժամանակը ուշ չէ՛ մտնած այլ եւ այլ կանխակալ կարծիքներ եւ անձնական նկատումներ ձեռք ձեռքի առնք, եւ պէտք եղածը ի գործ գնենք, որպէս զի կրկին բարոյական դա՛հները չլլանք մեր մանուկներուն:

Կր յուսանք թէ՛ արդի հոգարար-ծուրներն պատուարժան անդամները կարգաւոր մեր սրտարդիս սոյն երկսողը, նախ, ձեռնարկ պիտի ըլլան եւ հիմա՛ս ընէ սկսին մտածել այս արխուր վիճակի մասին, ու նկատողութեան աւելնելով նշանաւոր գրագետի մը խօսքը թէ՛ «Ազգ. մը» որ կանոնաւոր վարժարան չունի, կը գազրի իրր ազգ գոյութիւն ունենայլո, ամեն ջանք ի գործ պիտի գնեն վարժարաննայս բարեկարգելու համար:

Տա՛յր երկինք որ, յուսախար չըլլայինք:

Աշակերտ

Թ. Գ. — Իւրոյ կրմանքը թէ՛ Պուր կազի նախին խառնակ/չը եւ հանրածանօթ խառնակ/չը որ կամ իսասքովոյ մէջ՝ իր ժահրոտ լորձ. ւնք ներով մատող մանկիկներու ապագան կը թուաւորէ, դիմած է քաղաքիս անձնաւորութիւններէն մէկ քանիին եւ այժմէն իսկ ինքզինքը քանակի տ ներկայացուցած է վարժարանիս ուսուցչական պաշտօնին համար, վատու ենք թէ՛ Միւլդէնի ազգայինները եւ պաշտօնական մարմինները լաւ ճանչցած ըլլալով յիւսակին Ռոտեմակեան տխուր անցնալը, չի պիտի գիշարին իրենց կրթական վեճի յարկը սղելու, այդպիսի բարոյական մեռած ու պաշտօնի կանչելով, եւ եթէ երբէք, այդ ձախող ընտրութիւնը ընեն, իրաւունք պիտի ունենանք ըսելու թէ՛ «նման ըզ նման իր սիրէ»:

ՆԱՍՍԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ներկայիս կուգամ յայտարարել թէ՛ տնիւրոյս Սղոց. երկսեռ վարժարաններու Սանուց ընկերութեան գործիքներուն՝ դպրոցական 1902-1903 տարեշրջանին երբէք ու է կերպով խառնուած չեմ, և հետեւ ապիս ապագային սոյն ընկերութեան հաշիւներուն անկանոնութիւններուն՝ եթէ երբէք ծագին՝ ու է կերպով պատասխանատու չեմ:») Ե Ս մասի շխման յանալ, 41 Յունիս 1903

Ծ. Ռ. Այս յայտարարութիւնը բունի կատկած է հրատարակ Սանուց ինկերութեան վրայ, ուստի այդ ինկերութեան վարչիներ պարտաւորվում են չուսով հաշիւ «ներկայացնել կամ հոգաբարձութեան կամ թագականութեան, այդ կա. կածները փոքրատու համար:

Պ. Պ. ՌԻՆԿԵՆԻՆԻ ԵՒ ԱՍԵՂԻՆ

Պարոններ,
Լուրջ քննադատությունները կը
յարգենք, սակայն Ձեր բրած անճոռ-
նի դատողություններն էլ զի բին է հե-

11 Յուլիս 1903
Վասն
Մ. Յովհաննիսյան

ՓՅԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

Փոստընները վերջացան յեղափոխա-
կան փոքրամասնությունը ցրվեց հե-
ռուցաւ Կովկասի մայրաքաղաքից իր
աշխատությունը կցելու համար երկ-

ՇԱՐԺՈՒՍ-ի ՎԱՐԻՉԻՆԸ

Ձեր թերթի չորեքշաբթի օրուան
թիւը՝ գրեթէ ամբողջովին դրած էք
տրամադրութեան ներքեւ կարգ մը
ողբամբի արձեւում, որոնց միակ նը-

պէտք է թելադրել անկողնի վրայ
ստուգանք հասցնել հայ ժողովրդի
ընդհանուր օրինակը և մի փոքր հաւաս-
տուհի դէպք քաղաքակիրթ, զէպի

ո կ է անշահախնդիր վիճարանա-
թեան, և պիտի փութայինք պատաս-
խանել վարժարանական հանդէսի առ-
թիւ մեր խօսածներուն զէմ եղած ա-

11 Յուլիս 1903
Վասն

Չ. ՓԻՆՉԻՆԻԱՆԻ

Անցեալ անգամ յօդուած շարունա-
կելի թողոցի յուսարով որ դիւրին
պիտի ըլլայ նոյն ձեռով շարունակելը.

սենեկ մի հսկայական, աննկարա-
գրելի գոթային ոճի շարունակելը.
մի ոճի շարունակելը. մի ոճի պէտք է
սարսուղ ամբողջ մարդկութիւնը, գը-

8) Հայ գործիչներուն մէջ դրամով
և դիւանագրիտական խելքով ամենէն
հարուստն է Պ. Մինաս Չերազը։ Մոռ-
ցայ ընել որ այդ պարտը հարուստ է

Դրաւը հաւաքած է հայ հարուստ-
ներէն, անոնք Բարիկ կա՛մ Լոնտոն
գալուն օրերը և ժամանակները դի-
ւանագրիտական ծածկանքով հասկնա-

9) Գնահատական շերտն խելքով
հարուստ է մեր Արշակ Զօպանեանը.
մանաւանց անոր քաղաքական քննա-
դատութիւնը ուղիարէք զարմացու-

10) Համբերութիւնով հարուստ է
Բրոքիստր թումանը, իր Պատանի-
էն ձեռք քաշելու հիշ տրամադրութիւ-
նը չունի, թէեւ շատ քիչ հայ պա-

11) Օրմանեանի հայրենասիրութիւ-
նը չափ ու սահման չունի, գնդակով
անգամ անկարելի եղաւ զայն պատ-
րիարքական գահէն հեռացնել. ան-

(Շարունակելի)

Չոցնէրը, ոյժը ստեղծելու համար։
Մանուկ էին նրանք անօթի, ծարաւ,
միշտ վտանգներին ենթարկված, ա-

Մտնում էին այդ գործիչները կամ
բուսնում հէնց երկրի մէջ գրեթէ
բոլոր գրականները դնելով, գրելը ցե-
րեկ դարձնելով, լեռ ձոր ու գետ

(Շարունակելի)

Վ. Ս. Ռ.

ԱԶԴ

Վառնա, 11 Յուլիս 1903

Յառաջիկայ կիրակի, Յուլիս 13, Պուլկարիոյ Հայոց արժանաւոր Պատրիարքական փոխանորդ Գեորգի Ե. Վահան Ծ. վարդապետ Յակոբեան, որ քաղաքը հասած է, հանդերձեալ է Ս. պատարագ մատուցանել և իւր հոգեշունչ և պերճախօս քարոզութեամբը հոգեւորական միջոցաւ բերել բարեպաշտ ժողովուրդը:

Յետ աւարտման Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն եւս պիտի կատարուի ի հանդիստնն. չեցելոց անդամոց դպրաց դասուն, որոյ հաստատութեան Ե. տարեդարձն է նոյն օրը:

Չայտոսիկի քիտու թիւն բարեպաշտ ժողովուրդին կը ծանուցանեմք:

Ի Ղրմաց Թաղ. Արհրդոյ Աստուածատու Աստուածատու Ս. Գարսիսեան Յ. Ս. Թովմասեան (Կնիք)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պուլսոյ «Մանկուսէի Էֆրեար» թերթէն կիմանանք որ Զմիւռնիոյ առաջնորդ Մելիքեղէկ Մուրատեան եպիսկոպոսը մահամերձ հիւանդ է և բուժուելու յոյսը չը կայ: Նոյն թերթէն կիմանանք որ եպիսկոպոսը մօտ երեք հազար ոսկիի հարստութիւն ունի և արդէն կարգադրութիւն ըրած է: Կը յիշուի և Ս. Ստեփանոս եկեղեցու կալուածները: Չի հասկըցուիր թէ կարգադրութիւնը ինչ կերպ ըրած է:

— Պուլկարիոյ առաջնորդական փոխանորդը Վառնա կը գտնուի արդէն:

— Կիմանանք թէ այս տարի Վառնայի ազգային դպրոցներուն հոգաբարձութիւնը մտադիր է ամբողջ ուսուցչական խումբը բոլորովին պաշտօնէ արձակել:

— Վառնայի երգեցիկ ԳՈՂԻԱՆ խումբը յառաջիկայ շաբաթ մեծ պատրաստութեամբ քօնսէս մը պիտի տայ ի նպատակ խմբապետ Նաթան Սմիլիանեանցի: Հայ հասարակութիւնը պարտաւոր է քաջալերել հայ արեստագէտը:

— Շումլաէն բարեկամ մը մեզ կը հաղորդէ որ հոն ի նպատակ Զէյթունի հանդանակում է 147 լէվ և զրկված է Վառնայի թաղական խորհրդին:

— Յիլիպէի մէջ Միսոի և Չիլիչեանի սպանութեան առթիւ հոգեհանգիստ կատարուած է և բողոքի Յանձնախումբ մը կազմուած է: Սակայն հիմա Վերակազմեալներն ալ հին հնչակեաններու վիճակին ենթարկուեցան Սպասկիւնեանը սպաննել փորձելով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ միջնակարգ դպրոցներուն տեսուչները համաձայնով ունէին Սօֆիայի մէջ: Համաժողովին նպատակն էր միջնակարգ դպրոցներուն աւելի օգտակար ուղղութիւն մը տալու ըրազիր մշակել:

Ներկայ կը թակուն նախարարը ամէն ճիգ կը թափէ իր մեծ և պատասխանատու պաշտօնը արդիւնաւէտ գալ ձեռնել:

— Կառավարութիւնը շատ ալ ուշագրով է չի գործընդունել իրենքունի մը կարգադրութիւններուն գէժ եղած բողոքներու և կաշխատի միջոցներ ձեռք առնել ապագայ երեւոյթանական ժողովին մէջ կարեւոր մեծամասնութիւն ունենալ իր զիրքը աւելի ամրապնդելու համար:

Ներկայ կառավարութիւնը սեպտեմբեր կը պաշտպանուի միայն Ռոսուլ վիստրերու կողմէն: միւս բոլոր կուսակցութիւնները հակառակ են ներկայ կառավարութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլկար էքզարքը համաձայնելով Պուլկար կառավարութեան հետ (Թուրքիոյ մէջ գտնուած պուլկար ժողովուրդին հովուական լիզնով մը կը պատիրէ խաղաղ կենալ: Էքզարքը այս քայլը ընել յանձն առած է, որովհետեւ Պուլկար և Թուրք կառավարութեան միջև բանակցութիւնները կը շարունակուին Մակեդոնիայի խնդիրներու մասին որոշ համաձայնութեան մը յանգելու համար:

— Կրկնապատկերը կարատագրի սահմանազլիւն մօտեցը երկու կարատագրիներ սպաններ են: Կարատագրիք շատ յուզուած են Պուլսոյ ներկայացուցիչ Բակիչ բողոքներ է Թուրք կառավարութեան: Ինչու և Աւստրիական հիւպատոսները գացել են այդ գործը քննելու:

— Սուլթանի պալատական կարեւոր լրտեսներէն մին ներքին գործերու նախարարին ջանքերով պաշտօնանկ եղած է: Պաշտօնական շրջանակներուն մէջ Սուլթանին այդ քայլը մեծ զարմացում առաջ բերած է:

— Պուլսէն կը հաղորդեն թէ Շէմլի փաշան որ երկու շաբաթէ ի վեր կը գտնուի Սլայանիոյ «Լիւմա» կոչուած տեղը, յաջողութեամբ անցնելու քաղաքը, որոնք բարենորոգումներուն գէժ են: ձերբակալուած է նաեւ 30 աւազակներ: Պատրիարքը շրջականերու բոլոր շարագործներն ալ հարածանքի ենթարկելը

է և մինչեւ օրս արդէն ի բացակայութեան գատապարտուած 25 հոգի ձերբակալու են:

— Պուլսէն կը հաղորդեն որ Մառաշի զինուորական մէջ գեներալ-հարստները սակաւ կուսակցական հրահրութեամբ իրենքունի միջոցով բաց պաշտօնական շրջանակները կարեւորութիւն չեն տար, որուն իրր պայտջը կրնայ ծառայել այն որ, սուսուրական դէպքերը Սուլթանի հետ ունեցած վերջին տեսակցութեան միջոցին կրցել է արածուութիւն ստանալ գործուած քի գործարան մը հիմնելու համար:

ՍԵՐՊԻԱ

Կոմունիստները թագաւորը շրջապատողներու գէժ հետզհետէ մեծ ծաւալ կատանան: Դրժգոհութեան գլխաւոր առարկան է գնդապետ Միլչիչ որ քանի մը օրէ ի վեր պահապաններով կը պրտաւի:

ՌՈՒՄԻԱ

Կոմկասի Պագոյ քաղաքին մէջ 40000 գործաւորներ գործադուրբած են: Ոչ մէկ թերթ չի հըրատարակուիր, միայն քանի մը հայագործներ կաշխատին:

— Ռուսիոյ թերթերը, մանաւանդ «Նովոյե Կրէմլին» յարձական յօդուածներ կը հրատարակեն ծարսի գէժ, կուզեն ապացուցել որ ծարսի Ռուսիոյ հետ պատերազմած ստեն Լինգլիա անկարող պիտի ըլլայ օգնելու ծարսին:

— Պեթերպուրկէն կը հաղորդեն որ գիւղացիները սպանելու իրազանի նահանգի ազնւականներուն պարագլուխ իշխան Գաղարինը, այս սպանութիւնը քաղաքական կը կարծուի:

ԻՏԱԼԻԱ

Պապը հոգին աւանդել է յունիս 7 ի երկկոյան ժամը չորս և չորս վայրկեանին, վերջին պահուն միայն իր գիտակցութիւնը կորսնցուցել է:

Նոր պապ ընտրելու պատրաստութիւնները կը տեսնուին:

Պատ. «Նարմուս» լրագրոյ

Սեւ. Տեար Միսոք Տէմիրճեան իր ամուսնութեան առթիւ Ազգատախնամ ընկերութեան նորից 10 ֆռ. լիւրտոս ենք թէ յիշեալին այս բարի օրինակին հետեւողներ պիտի ըլլան. նոյնպէս շնորհակալութեամբ նուէր ստացանք Տեար Յարութիւն Խաչիկեանէ 2 ֆռ:

Ի զիմաց գործարար ժողովոյ Աստուածատու Աստուածատու Գարագաշ ան Աստուածատու Վառնա 10 Յուլիս 1903

ԹԱՏՐՈՆ ԲԻԿԱ

ՀԱՅԻ ԲՆԱԿՕ

Ներկայացուցի «ՆԱՏԻԺՏՍ» Հայ գերատանական խմբին առաջնորդութեամբ Պ. Կ. ՊԱՊԱՆՆԻ:

Ամէն երկկոյ ներկայացմանց շարունակութիւն

Եղեղերգ, Երգեր, պարեր, ժիւնատակի եւ ծիծաղաշալժ գովեստներ:

Վաղը կիրակի երկկոյ մեծապատրաստութեամբ պիտի ներկայացուի:

«Եղարարական» Նոր թատերախումբ 3 արտ, 2 պատկեր

Գին մտց տուս 50 սանթիմ Տղայոց, 25

ԱՐՆԵՆԵՆԵՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՈՍՏՈՒՆ

Լօզան, Զուիցերիա

Երկ որդ արտի

Բ. տարւելանի գատախօսութիւնները կակին Սեպտ. 1/14ին

Սրբելեան կամ հայկական կրթատունը կը ղրկուի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ձեռքներու բազմաքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական ստղծու լուրջ կրթութիւն մը, ներդաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ: Հայ աշակերտներուն կաւանդուին, և այս դասանց ու է վճարում: Հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւայլն: Ընտանեկան կեանք:

Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրաձայնութիւնը պրոցներէն: Կրթատան տարեթուակը, հակառակ ընծայուած բազմաթիւ բողոքական առաւելութիւններուն, դանձորինակ կերպով աման է: Կրթատան յայտագրին ամէն ուղղով կը զրկուի:

ՏՆՕՐԷՆ, Մ. Նաչպետեան և Տօքթ. ի գիտութիւն հաստատարանական մասնաւոր-ուսուցիչ Հասցէ՝ Լօզան 4. Լօզան. — Սիւիս

ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

Տէր եւ Տիկին Գայանեան կը ղրկուին թոշակաւոր հոյ պատանիներ, կուտան անոնց հայկականին հետ Զուիցերիական ստղծ պատարարութիւն, կը պատրաստեն զանաք իրենց տարիքին եւ ընդունակութեան յարմար դասընթացներու քաղաքի վարժարաններուն մէջ, կապանովն ընտանեկան խնամք եւ դոհացուցիչ յաջողութիւն: Մանրամասնութեանց համար անպապաղ գրիմէլ առ Յ. Գայանեան 47 Թանկհրտրաս (Սուից)

Отговорникъ Мурадъ Ераносянъ

Печатница «Взаимность» Варш